ՔԱՂՎԱԾՔ

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝
2024 թվականի մայիսի 22-ի, ժամը 14:00-ի նիստի
N 10 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ.- **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի կառավարման ամբիոնի պրոֆեսորի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու նպատակով** («Առավոտ» օրաթերթ, 15.03.2024, N 047) կառավարման ամբիոնի պրոֆեսոր, տնտեսագիտության թեկնածու **Խորեն Ալբերտի Մխիթարյանի**՝ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատարին ուղղված դիմումի մասին հարցը:

Զեկուցող՝ գիտական խորհրդին կից մրցութային հանձնաժողովի նախագահ, միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ **Ա.Ա.Մկրտչյան**:

Զեկուցողը նշեց. «Առավոտ» օրաթերթի 2024 թվականի մարտի 15-ի N 047 համարում **հայտարարվել է մրցույթ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի կառավարման ամբիոնի պրոֆեսորի թափուր պաշտոնի համար**: «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի 2021 թվականի ապրիլի 14-ի N 9 - 1 որոշմամբ հաստատված ««Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության ակադեմիական կազմի ձևավորման կանոնակարգի» 9-րդ կետի համաձայն՝ «**Պրոֆեսորի** պաշտոն կարող են զբաղեցնել այն անձինք, ովքեր համապատասխան մասնագիտությամբ ունեն գիտությունների դոկտորի կամ թեկնածուի (PhD) գիտական աստիճան և պրոֆեսորի գիտական կոչում, կամ գիտությունների դոկտորի կամ թեկնածուի (PhD) գիտական աստիճան և հրատարակված առնվազն 20 գիտական աշխատանք (այդ թվում 4-ը՝ ազդեցության գործակից ունեցող ամսագրերում), հեղինակ են (կամ համահեղինակ են) դասագրքի կամ ուսումնական ձեռնարկի կամ մենագրության, ունեն 15 տարվա գիտմանկավարժական ստաժ:»: Կառավարման ամբիոնի պրոֆեսորի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու նպատակով 2024 թվականի ապրիլի 11-ին ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատարին դիմում է ներկայացրել կառավարման ամբիոնի պրոֆեսոր, տնտեսագիտության թեկնածու **Խորեն Ալբերտի**

Մխիթարյանը: Պրոֆեսորի թափուր պաշտոնի հավակնորդը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությամբ և ««Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության ակադեմիական կազմի ձևավորման կանոնակարգով» սահմանված պահանջներին համապատասխան ներկայացրել է անհրաժեշտ փաստաթղթերը (առկա են նաև ատեստավորման (վերապատրաստման, որակավորման բարձրացման) փաստաթղթերը):

Ա.Ա.Մկրտչյանը նշեց. Խ.Ա.Մխիթարյանը ծնվել է 1966 թվականի հոկտեմբերի 14-ին Երևանում՝ ծառայողի ընտանիքում: 1983 թվականին ավարտելով Ե.Չարենցի անվան թիվ 67 միջնակարգ դպրոցը, ընդունվել է Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտի (ԵրԺՏԻ, ներկայում՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան, ՀՊՏՀ) աշխատանքի էկոնոմիկայի և կազմակերպման ֆակուլտետի «Աշխատանքի էկոնոմիկա» մասնագիտության առաջին կուրս, որն ավարտել է 1989 թվականին՝ ստանալով տնտեսագետի որակավորում: 1985-1987 թթ. ծառայել է Խորհրդային բանակում: 1995-1998 թթ. ձևակերպվել է հայցորդ ԵրԺՏԻ-ի կառավարման ամբիոնում և կատարել ծրագրով նախատեսված հայցորդի իր պարտականությունները:

Խ.Ա.Մխիթարյանը 1996 թվականին պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն «Հայաստանի Հանրապետության բանկային համակարգի կառավարման կազմակերպական կառուցվածքի զարգացումը շուկայական հարաբերություններին անցման փուլում» թեմայով Ը.00.02՝ «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ և ՀՀ ԲՈՀ-ի (ներկայում՝ ԲԿԳԿ) կողմից նրան շնորհվել է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան: 2002 թվականին ՀՀ ԲՈՀ-ի կողմից նրան շնորհվել է դոցենտի գիտական կոչում, իսկ 2023 թվականին ԲԿԳԿ-ի կողմից նրան շնորհվել է պրոֆեսորի գիտական կոչում «Տնտեսագիտություն» մասնագիտությամբ: Խ.Ա.Մխիթարյանն ունի տվյալ բնագավառի ինչպես գիտական, այնպես էլ ուսումնամեթոդական աշխատանքներ, որոնց ընդհանուր թիվը 48 է, այդ թվում՝ վերջին 5 տարվա ընթացքում՝ 8 աշխատանք (2 կոլեկտիվ մենագրություն, որից 1-ը՝ «Ամբերդ» մատենաշար, 3 ուսումնական ձեռնարկ, որից 1-ը՝ համահեղինակությամբ, 4 դասագիրք՝ համահեղինակությամբ, որից 3-ը «Մենեջմենթ» դասագիրքն է՝ հրատարակված տարբեր տարիներին, 1 գործարար խաղի կազմակերպման ուղեցույց՝ համահեղինակությամբ, 32 գիտական հոդված՝ տպագրված ՀՀ գիտական ամսագրերում, որից 8-ը՝ համահեղինակությամբ, 6 գիտական հոդված՝ տպագրված միջազգային

գիտական ամսագրերում): Խ.Ա.Մխիթարյանի գիտական ղեկավարությամբ պաշտպանվել և ՀՀ ԲՈԿ-ի (ներկայում՝ ԲԿԳԿ) կողմից հաստատվել է 6 թեկնածուական ատենախոսություն:

Աշխատանքային գործունեությունը: Խ.Ա.Մխիթարյանը 10.07.1989 - 01.10.1990 աշխատել է Երևանի կաբելի գործարանի աշխատանքի և աշխատավարձի կազմակերպման բաժնում որպես տնտեսագետ, 10.10.1990 - 10.08.1991՝ ԵրԺՏԻ-ի աշխատանքի էկոնոմիկայի և սոցիոլոգիայի ամբիոնում որպես փորձնակ-հետազոտող, 1990-1992 թթ.՝ Հայէկոնոմբանկի («Ժիլսոցբանկի») Մյասնիկյանի մասնաճյուղի վարկային բաժնում որպես վարկային մասնագետ, 1992-1996 թթ.՝ «Մասիս» առևտրային բանկում որպես վարկային վարչության պետ: Խ.Ա.Մխիթարյանը 1993 թվականի սեպտեմբերի 1-ից առ այսօր աշխատում է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի կառավարման ամբիոնում. 01.09.1993 - 24.04.1997՝ ասիստենտ, 24.09.1997 - 02.09.2012՝ դոցենտ, 03.09.2012 - 31.08.2015՝ համատեղությամբ դոցենտ (0,5 դրույք), 01.09.2015 - 01.07.2019՝ համատեղությամբ դոցենտ (0,25 դրույք): Խ.Ա.Մխիթարյանը գիտամանկավարժական աշխատանքին զուգահեռ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում զբաղեցրել է նաև վարչական պաշտոններ. 03.09.2012 - 14.09.2016՝ գիտության բաժնի պետ, 15.09.2016 - 12.05.2019՝ գիտության և ասպիրանտուրայի բաժնի պետ, 13.05.2019 - 26.08.2020՝ գիտահետազոտական աշխատանքների կազմակերպման բաժնի պետ, 02.09.2019 - 26.08.2020՝ լրացուցիչ կատարել է կառավարման ամբիոնի վարիչի գործառույթները, 27.08.2020 - 22.03.2022՝ կառավարման ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար, 23.03.2022 - 04.02.2024՝ դոցենտ, 2024 թվականի փետրվարի 5-ից առ այսօր՝ պրոֆեսոր, 07.07.2014 - 01.09.2019՝ լրացուցիչ կատարել է «Բանբեր ՀՊՏՀ» գիտական հանդեսի խմբագրի տեղակալի գործառույթները: Խ.Ա.Մխիթարյանը աշխատում է նաև Երևանի «Գլաձոր» համալսարանի ընդհանուր տնտեսագիտության ամբիոնում. 1996-1997 թթ՝ դոցենտ, 1997 թվականից առ այսօր՝ ամբիոնի վարիչ:

2015 թվականի նոյեմբերին երիտասարդ սերնդի մասնագիտական կրթության գործում ներդրած նշանակալի ավանդի կապակցությամբ Խ.Ա.Մխիթարյանը պարգևատրվել է ՀՀ վարչապետի շնորհակալագրով և Երևանի «Գլաձոր» համալսարանի հուշամեդալով: Քանի որ ազատ տիրապետում է անգլերենին, ժամանակ առ ժամանակ դասավանդել է նաև միջազգային մի շարք բուհերում որպես «այցելող պրոֆեսոր» (visiting professor): Ազատ տիրապետում է հայերենին, ռուսերենին և անգլերենին:

Ամուսնացած է, ունի 2 զավակ: Անկուսակցական է:

Ա.Ա.Մկրտչյանը նշեց. Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի կառավարման ամբիոնի 2024 թվականի ապրիլի 23-ի նիստում (արձանագրություն N 11) քննարկվել է կառավարման ամբիոնի պրոֆեսորի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին դիմած հավակնորդ Խ.Ա.Մխիթարյանի՝ ««Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության ակադեմիական կազմի ձևավորման կանոնակարգի» 22-րդ կետի պահանջներին համապատասխան հավակնորդի վերաբերյալ կարծիք արտահայտելու և քվեարկությամբ երաշխավորելու մասին հարցը: Բաց քվեարկության արդյունքներով (կողմ՝ 26, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0) ամբիոնը երաշխավորել է Խ.Ա.Մխիթարյանի թեկնածությունը ամբիոնի պրոֆեսորի պաշտոնում:

Գիտական խորհրդին կից մրցութային հանձնաժողովի 2024 թվականի ապրիլի 30-ի, ժամը 15:00-ի նիստում (արձանագրություն N 4) քննարկվել է կառավարման ամբիոնի պրոֆեսորի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին դիմած հավակնորդ Խ.Ա.Մխիթարյանի՝ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության ակադեմիական կազմի ձևավորման կանոնակարգի» 23-րդ կետի պահանջներին համապատասխան հավակնորդի՝ հայցվող պաշտոնին համապատասխանության վերաբերյալ եզրակացություն տալու մասին հարցը: Հավակնորդի՝ հայցվող պաշտոնին համապատասխանության հարցը դրվել է մրցութային հանձնաժողովի նիստի բաց քվեարկությանը: Քվեարկության արդյունքներով (մրցութային հանձնաժողովի 10 անդամից նիստին ներկա էին 9-ը. կողմ՝ 9, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0) որոշվել է, որ կառավարման ամբիոնի պրոֆեսորի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին դիմած հավակնորդ Խ.Ա.Մխիթարյանի թեկնածությունը համապատասխանում է հայցվող պաշտոնին: Ա.Ա.Մկրտչյանը գիտական խորհրդի անդամներին հորդորեց հաշվի առնել ամբիոնի և մրցութային հանձնաժողովի նիստերի որոշումները:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.-

Դոցենտ Ա.Վ.Գրիգորյանը:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ գիտական խորհուրդը որոշեց Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի կառավարման ամբիոնի պրոֆեսոր, տնտեսագիտության թեկնածու Խորեն Ալբերտի Մխիթարյանի թեկնածությունը դնել գիտական խորհրդի փակ գաղտնի քվեարկությանը՝ կառավարման ամբիոնի պրոֆեսորի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու համար (որոշումն ընդունվեց բաց քվեարկությամբ,

միաձայն. գիտական խորհրդի 60 անդամից նիստին այդ պահին ներկա էին 49-ը. կողմ՝ 49, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0):

Քվեարկության արդյունքներն են. գիտական խորհրդի 60 անդամից նիստին այդ պահին ներկա էին 51-ը, քվեարկությանը մասնակցել են 51-ը: Փակ գաղտնի քվեարկության արդյունքներն են. կողմ՝ 51, դեմ՝ 0, անվավեր քվեաթերթիկ՝ 0:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հիմք ընդունելով «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի 2021 թվականի ապրիլի 14-ի N 9 - 1 որոշմամբ հաստատված ««Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության ակադեմիական կազմի ձևավորման կանոնակարգի» 31-րդ կետը, կառավարման ամբիոնի պրոֆեսորի թափուր պաշտոնի ընտրության նպատակով գիտական խորհրդի նիստում ընտրված հաշվիչ հանձնաժողովի նիստի N 1 արձանագրությունը և փակ գաղտնի քվեարկության արդյունքները (**կողմ՝ 51, դեմ՝ 0, անվավեր քվեաթերթիկ՝ 0**)՝ **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի կառավարման ամբիոնի պրոֆեսորի թափուր պաշտոնում համարել ընտրված տնտեսագիտության թեկնածու, պրոֆեսոր Խորեն Ալբերտի Մխիթարյանին**:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Ա. Վ. Գրիգորյան**

Գիտական խորհրդի քարտուղար՝ **Ն. Հ. Դարբինյան**

2024 թ. մայիսի 22
Երևան